VEOLIA
Ջուր

«20» մարտի 2020թ.
N 20/3310

«Հետաքննող լրագրողներ» հասարակական
կազմակերպության լրագրող
Ամալյա Մարգարյանին
Էլ-փոստ՝ amalia.margarian@gmail.com

Առարկան՝ հարցման պատասխան

Հարգելի տիկին Մարգարյան,

Ի պատասխան Ձեր 17.02.2020թ. հարցման՝ հայտնում եմ, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.11.2016թ. թիվ 378-Ն որոշմամբ սահմանված Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով (ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից) սահմանված են առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակացման, ստուգաչափման, սպասարկման, պահպանության հետ կապված հարաբերությունները: Կանոններին կարող եք ծանոթանալ arils.am իրավական տեղեկատվական համակարգում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափումն իրականացվում է անկախ մարմնի՝ Չափագիտության ազգային ինստիտուտի ներկայացուցչի, լիցենզավորված ստուգաչափողի կողմից և ստուգաչափման արդյունքում տրվում փորձագիտական եզրակացություն: Այն հիմք է հանդիսանում ընկերության կողմից դրանից բխող համապատասխան գործողությունների կատարման համար:

Հայտնում եմ նաև, որ բողոքներ ունենալու դեպքում կարող եք դիմել ընկերությանը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ office@vjur.am, com@vjur.am հասցեների միջոցով, կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով՝ 1-85, 011 300 185, 0 8000 185 հեռախոսահամարներով:

Հարգանքով՝ Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Պատասխանատու՝
Մ. Միրզոյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 3310
20» 02 2020թ.

ՀՀ, ք. Երևան, 375025, Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ office@vjur.am
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, St.Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: office@vjur.am
Web site: www.veolia.am